ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» Հունվարի 2026 թվականի N 1462 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 136.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 49.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (37.57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ 208.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (163.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բորյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 136.84 (մեկ հարյուր երեսունվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 49.23 (քառասունինն ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (37.57 (երեսունյոթ ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն և 208.84 (երկու հարյուր ութ ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (163.2 (մեկ հարյուր վաթսուներեք ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական նշանակության շինություններ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և 4-րդ բաժնի 34.2-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026DQFGFM ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Բորյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 136.84 (մեկ հարյուր երեսունվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 49.23 (քառասունինն ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (37.57 (երեսունյոթ ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն և 208.84 (երկու հարյուր ութ ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (163.2 (մեկ հարյուր վաթսուներեք ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական նշանակության շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի և հասարակական նշանակության շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցները իրականացրած քաղաքացի Տաթևիկ Աշոտի Կարապետյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Восстановимая подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի